Պարույր Սևակ

Հավատարմությունը սրտի արատ չէ

3

11

Եվ ահա կախվեց
Քո ծանրը հարցը.
-...Լքո՞ւմ ես հիմա:
Ո՞նց լքեմ,
Հիմա՛ր:
Ոնց լքեմ,
Թե մենք
Հնդկաստաններում մեկտեղ ենք սովել,
Եվ քրթներիս տակ - կողքներիս ծովեր՝
Անջուր պապակվել,
Տապից տապակվել
Սահարաներում,
Արևին մոտիկ՝
Բքից տապակվել
Բևեռի սառցե սահարաներում...
Քեզ ինչպե՞ս հիմա
Ես լքեմ, հիմա՛ր,

Եթե միասին
Մեկտեղ ենք արել ապուշություններ՝
Բրոնակալներին ջերմություն տվել,
Սողուն ծընվածին՝
Ոտքեր ու թևեր...
Մեկտեղ ենք արել և գժություններ՝.
Գահեր ենք շրջել,
Արյունով թրջել
Գոռ հաղթանա՛կը արդար ոխության -
Ապըստամբելով՝
Փըրկվել ենք փորձել
Եվ պարզել դըրոշ հեղափոխության...
Մեկտեղ ենք կրել,
Միասին տարել
Նաև ահավոր խժդժություններ՝
Բարբարոսներից մինչև Աթիլլա,
Հոներից - թուրքեր,
Թուրքերից - ֆաշիզմ.
Վճարել արցունք,
Ո՛չ միայն տուրքեր.
Նաև՝ մեր կաշին,
Ո՛չ միայն քուրքեր.
Կորցըրել հավատ,
Ո՛չ միայն կուռքեր...

12

Քանի՜ որդի ես դու ինձ պարգևել...
Հիշել ո՞ր մեկին,
Ո՞ր մեկին թվել...

Նրանցից մեկը գոչեց. «Էվրիկա»...
Երկրորդն էլ գտավ - ողջ Ամերիկան...
Երրորդն էլ սկսեց Պարթենոն շինել...
Չորրորդը խորհեց. «Լինել-չլինել»...
Մեկն ինձ քանդակեց՝
Մովսեսի դեմքով
Ու մարմնով Դավթի:
Մեկ ուրիշն ահա
Ծընվեց,
որ հետո
Ջրից հուր գավթի
Ու թևեր՝
նավթից:
Մեկը խլացավ,
Շընկըճվեց սակայն
Ու «Հերոսական սիմֆոնիա» գրեց:
Մեկ ուրիշ որդիդ՝
Ծագումով հրեա,
Հրեա Հիսուսի հին միֆը ցրեց
Եվ ինքը դարձավ իրական փրկիչ -
Իր միտքը դրեց
Մի կյանքի հիմքում,
Ուր՝
Ո՛չ տեր-ծառա,
Ո՛չ զրկյալ-զրկիչ...
Քանի՜ զավակ ես դու ինձ պարգևել...
Իսկ քանի՜ զավակ մենք զոհ ենք տվել:
Հիշել ո՞ր մեկին,
Ո՞ր մեկին թվել...
Այսքանից հետո

Լքե՞լ քեզ հիմա:
Ախար հասկացի՛ր.
Որքան ջանում եմ՝
Էլի մտքերրս քո շուրջն են պըտտում...
Պըտտում են համառ,
Ինչպես թիթեռը...
(Չէ՛ մի, ի՛նչ թիթեռ)
...Ինչպես որ հիմա
Օդազուրկ օդում
Արբանյակներն են քո շուրջը պըտտում...
Մինչդեռ դու, նորի՛ց,
Քո բևեռների վարար ձընհալով
Համրաձայն լալով՝
Ասում ես կամաց.
-...Լքո՞ւմ ես հիմա:
Իզուր ես լալիս,
Ջուր ես հոգ անում:
...Քո վախը սակայն լավ եմ հասկանում:
Իրարից հեռու,
Բայց դեմ-հանդիման՝
Մոլորակներով լի է երկինքը,
Եվ ամեն մեկը... կին է քեզ նման:
Իսկ դո՛ւ...
Չէ՞ որ դու քո մրցակցուհուն
Երբեք չես զիջի ո՛չ մի բան,
Ոչի՛նչ -
Ո՛չ չոր մի ցողուն,
Ո՛չ կանաչ մի սինձ,
Եվ ո՛չ էլ անգամ
Սովորական քար,

Որ երբ նետում են,
Չի գնում հեռու -
Իսկույն ձգելով՝
Դու ետ ես բերում...

13

Ահա հենց ինքը Լուսինը լաչառ,
Որ քո դեմ անվերջ դավեր է նյութել,
Քեզ տրրվածներին ձրգտել է դյութել,
Բայց մինչև այսօր չեն օգնել նրա
Ո՛չ մարմինը մերկ,
Ո՛չ դեմքը սիրուն,
Ո՛չ անկեղծ պահեր,
Ո՛չ խաղ ու կեղծիք:
Ու թե ազդել է՝
Լոկ նրանց վրա,
Որ քեզ ամենից տկար են սիրում -
Լոկ ծովի վրա
Ու... բանաստեղծի:
Լուսնա-կնամոլ ու հեշտաբարո
Օվկիանոսներն ու ծովերն իսկապես
Մակընթացության իրենց ալիքով
Ձրգտում են թողնել փակ ափերը քո,
Ձրգվում են դեպի լանջաբաց ու հին
Այդ Լուսին կոչված էժան պրչրուհին,
Ձրգվում են...
Սակայն
Դու ամեն անգամ
Բարկությամբ կնոջ

Ներքուստ ծփում ես
Եվ ստիպում ես,
Որ ետ դառնան գան:
Եվ անուղղելի,
Բայց և ձախողակ
Այդ կնամոլը՝
Նույն ծովն այդ
ահա՝
Ջրոջացած արդեն
Եվ ամոթահար,
Աչքերը լեցուն
Ներումնահայցման աղի թացությամբ՝
Նորից,
Շան նման,
Փարում ոտերիդ,
Ափերդ է լիզում -
մակընթացությամբ...
Իսկ պոետնե՞րը...
Եթե ճիշտն ասել՝
Թույլ տղամարդ են,
Քան թե կնասեր...
Եվ դու
Նույնիսկ քո այդ պաղ ու շիջուն,
Այդ թույլ ու տկար սիրեկաններին,
Մինչևիսկ նրա՞նց
Լուսնին չե՛ս զիջում.
Ինչպես մանկանը՝ իր խաղալիքով,
Խաբում ես նրանց ծառ ու ծաղիկով,
Արբեցնում նրանց փառք - ըմպելիքով,
Հմայում նրանց

Մայրամուտներով ու ծեգով ոսկե,-
Եվ նրանք քեզ, կի՛ն,
Ասում են կրկին
Երդումի՛,
Սիրո՛,
Քնքշանքի՛ խոսքեր...

14

Այնպես որ՝ Լուսնից դու մի՛ վախենա:
Եվ ի՞նչ դու չունես,
Որով խաբի նա:
Ինչ-որ «կրկեսնե՞ր»:
Բայց մի՞թե երբեմն
Ինչպես ինձ՝
Եվ քեզ
Կյանքը չի թվում
Կատարյալ կրկես...
Իրոք. ի՞նչ չունես,
Որով խաբի նա:
Իսկ այն,
Ինչ ունես՝
Նա չունի բնա՛վ:
Արևը՛ս վկա.
Այստեղ էլ, ուր կա
Մթնոլորտ
Եվ օդ,
Այստեղ էլ ախար
Այնքա՛ն անհոգի բան է կատարվում՝
Նեղում են այնքա՛ն,

Սեղմում են այնքա՛ն,
Որ հաճախ մարդու շունչ է կտրվում:
Հերիք չէ՞ այս դեռ:
Իսկ Լուսնի վրա
Բնավ օ՛դ չկա,
Մթնոլո՛ռտ չկա...
Եվ այնտեղ չկան
Ամպե՛ր,
Զո՛ւր,
Քամի՛,
Չկան տեղումնե՛ր.
Որպիսի՛ տաղտուկ -
Ո՛չ հույս փոփոխման,
Ո՛չ էլ շեղումներ...

15

Սակայն երկյուղը դեռ անց չի կենում,
Եվ ես քո վախը լավ եմ հասկանում:
Քո դե՛մքը...
Գիտե՛մ,
Նա գրավի՛չ չէ,
Գուցե վանի՛չ է,
Անախորժալի՛ -
Ծաղկատար է նա՝
Ձոր ու խորշերից:
Մինչդեռ Վեներա՛ն...
Նա չժանգոտող ազնիվ արծաթ է
Եվ կամ պարզապես խտացած կաթ է:
Իսկ հապա Մա՛րսը...

Նա վտանգավոր մի նորահարս է,
Դա պարզ է,
Թեպետ սուտլիկն այդ սիրուն
Տղամարդկային անուն է կրում:
Մինչդեռ մի ոմն լպրստված Սատուրն՝
Գայթակղողելու ախտին անձնատուր
Մի անվանափոխ այլ խանում-խաթուն,
Հերիք չէ ունի ձիգ-ջահել հասակ,
Երկրրպագուներ հազար մի տեսակ,
Հերիք չէ -
Որ դեռ գլխին էլ ունի
Մի մեքսիկական շքեղ սոմբրերո՞,
Թե՞ մի երկնային վառ լուսապրսակ,
Ու ման է գալիս՝
Շուրջը սրփռելով
Դյութանք
Ու վտանգ...